



ԾԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55ՐԴ ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 11

3 ՓԵՏՐՎԱՐ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր Կին Գրողները

Ուրուագիրներ

«Առաւել»ը, Յ. Զիննիրենան, Յակոբ Ոսկան

Հովերու Սոյլը

«Ծաղիկ» Կանանց Շարաքարերը

Նոր պարզեւներ Մասիսի բաժանորդագրութեան

Նոր Գիրքեր

Քրոնիկ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՏՕՄԻՆՕ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՏԻԳՐԱՆ ԶԻԹՃԵԱՆ

Ե. Ա.

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԱՆ

1907

HAITI

1875

THE HAITIAN

NEW YORK

1875

1875

1875

1875

1875

1875

1875

1875

1875

1875

1875

1875

1875

1875

1875

1875

1875

1875

1875


1875

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12
 ներու, միգային ճամբաններու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին և նոր գաղիական անտերը: Այս վերջին անտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոսներով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Չորեքշաբթի օրերը միայն ձրի:

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ դատ, մանազիտարար և երկար տարիներէ ի վեր կը դարմանէ մտամոքսի, աղիքներու, հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին և նոր գաղիական անտերը: Այս վերջին անտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոսներով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Չորեքշաբթի օրերը միայն ձրի:

(8-10)



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոսքի ու ոսքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է՝ այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը և դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատուններուն մէջ՝

ՇԱՐԲԱԹԱԿԱՆ
 ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԿԱՆԱԹԱ

ԲԵՐԱ

ՊՈԼԻՍ

ԱՆԻՏԱՐ

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, 343 և 343.
 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ,
 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.
 1. Սուլթան Համամ.
 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ. 13.
- Զարը Պօյու, Թ. 120.
 Դասերը եւ նորոգութիւնները ձրի.

կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնաձեւեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ Փողոց, Թիւ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղզուրի տունը:

(9-10)

Երգնկայէն կը գրեն. — «Կեզը. Ուսումնարանին մէջ Նոր Տարին աեզի ունեցաւ հանդէս մը: Պ. Վաղինակ Մէշկոյեան թուրքերէն լեզուով ուղերձ մը ըրաւ: Ուսանողներուն կողմէ ներկայացուեցաւ Պարոնեանի «Մեծագատիւ Մուրացկաններ»ը: Հայկ-Արամ էֆ. Խաչատուրեան նուագաժողովիւններ ըրաւ: — Պատրիարքարանի 4000 ոսկի պարտքին իբր նպաստ՝ Վսեմ. Պօղոս Նուպար փաշա 500, Վսեմ. Աբրահամ փաշա Բարթոն 200 և Պետրոս էֆ. Կարապետեան (Գահիրէ) 50 անգլ. ոսկի զրկած են Ս. Պատրիարքին: — Վսեմ. Պօղոս Նուպար փաշա 100 անգլ. ոսկի ալ նուիրած է Ազգ. Հիւանդանոցին: — Երգնկայի մէջ արգելանաւոր ուսուցիչ Նշան էֆ. Գուլումճեանի նպաստին նուագահանդէս մը պիտի տրուի: — Սկիւտարի թաղեցիներէն իր անկեղծ ու առատաձեռն եկեղեցատիրութիւնովը, ու կրթական և եկեղեցական գործերու մէջ գործնա գերովը ծանօթ Միհրան էֆ. Պէզազեան Ս. Կարապետ եկեղեցիի դպիրներուն շապիկներ շինել տուած է՝ 20 ոսկի յատկացնելով այդ նպատակին: — Մայրաքաղաքիս Հայ թերթերու Տնօրէնները այցելութիւն տուին Սուրհանդակի և Ճեղքի Շարժիչի Տէր և Տնօրէն Տիգրան էֆ. Ճիվէլէկեանի, տպաքինում մաղթելու համար իր տկարութենէն: — Երկուշաբթի Ս. Պատրիարքին անուան տօնախմբութիւնը բլաւով, Ն. Սրբազնութիւնը Պատրիարքարանի մէջ պիտի ընդունի շնորհաւորական այցելութիւնները: — Գաբու Աղղեցի (Նիքսոր) Բողկանօղլու Սարգիս, Դանիէլ օղլու Յակոբօսի ազջիկը գիշերանց առեւանգելով, Ասարճըզ գիւղը կը տանի և անոր հետ կը պսակուի յոյն քահանայէն: Եւդոկիոյ առաջ. փոխանորդ Տ. Ներսէս վրդ. Մկրտիչեան քննած է թէ Սարգիս նախապէս կնութեան ուղած է աղջիկը՝ Իսկուհին, բայց մերժուելով՝ առեւանգած է աղջիկը: — Մուրատ-Ռափայէլեան Վարժարանին փախստական Տեսուչ Հ. Ստեփան Սարեան Մխիթարեան վարդապետին իւրացուցած գումարները կը հասնին 200,000 ֆրանքի: Հ. Սարեան թողած է 70,000 ֆրանքի պարտք մը: Իսկ Հ. Սարեանի իրեն հետ տարած գումարն է 150,000 ֆր.: Դեկտ. 26ին, Հ. Ստեփան Վ. Սարեան, յանկարծակի կը մեկնի Մուրատ-Ռափայէլեան վարժարանէն, իր երեք արքանեակներուն հետ, դէպի Եգիպտոս: Հիմա առժամեայ տեսուչ մը կարգուած է, Հ. Արիստակէս. օգնական՝ Հ. Անանիա Վ. Կունտակճեան և Հ. Սիմոն Վ. Երեմեան:

ՆՇԱՆԱԿՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ. — Տիար Մարշիկ Զ. Պետրոսեան և Օր Մառի Ճերմակեան՝ նշանուած (Իգմիր): — Տիար Դրիգոր Ճերմակեան՝ նշանուած Օր. Եռանդիկ Դերձակեանի հետ, Դերձակեանց բնակարանին մէջ, Սալմաթոմբոք, — Տիար Կարապետ Պապեան և Օր. Սրբուհի Նազարեան՝ նշանուած, Շիշլի, Նազարէթեանց բնակարանին մէջ:

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ. — Տիար Միկայիլ Պոյաճեան՝ ամուսնացած Օր. Վարսենիկ Մալեանի հետ (Պարտիզակ): Տիար Խաչիկ իշ ինկիրեան՝ ամուսնացած Օր. Մառի Սարափեանի հետ (Պանարմա):

ՄԱՐԹԱԹԵՐԹ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

5507 ՏԱՐԻՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 11

3 ՓԵՏՐՎԱՐ 1907

ՄԵՐ ԿԻՆ ԳՐՈՂՆԵՐԸ

Մասիսի Բանաստեղծութեան Մրցումին մէջ կին գրողի մը յաղթանակը և մեր լրագրութեան մէջ իր յայտնումը՝ մշակուած ու վարժ իր գրիչովը, անգամ մըն ալ ուշադրութիւնները դարձուց կին գրողներուն վրայ։ Այս պարագայէն լուսեայն ցայտող հարցը սա՛ եղաւ թէ՛ երբ կան կին գրիչներ՝ կարող մինչեւ անգամ գրական մրցումի մը խտտապահանջ կնճիւններուն մէջէն առաջնութեան իրաւունքը չահելու՝ ինչո՞ւ անծանօթ ու լուռ կը մնան անոնք, հաղիւ պատահարաւ մասնակցելով գրական շարժումին, և իրենց կարողութեան յայտնումը վերապահելով բացառիկ առիթներու։ Ահաւասիկ հարց մը՝ որ պարբերաբար ծնունդ կ'առնէ մեր լրագրութեան մէջ, և որուն սակայն պատասխանը անորոշ կը մնայ։ Որո՞նքն է իրաւունքի կողմը. այդ գրողներո՞նք, որոնք մանիչակի համեստութիւնով կը թաքչին աչքէ հեռու անծանօթ ուղորաներու մէջ. թէ՛ միւսներունը, հարցախնդիր գանգատողներունը՝ որոնք առանց իրերու «ինչու»ն քրքրելու, բողոքի յանկերգ մը ունին շրթունքնուն ծայրը։ Դժուա՛ր է վճռական պատասխանով մը փակել հարցը, որովհետեւ կարծուածին չափ պարզ չէ անոր լուծումը, և այն կնճիւնները՝ որոնց մէջ ծրարուած է ան՝ բարդ են ու անքակտելի։

Ուշագիր ակնարկ մը մէկ անգամէն կարող է համոզելու թէ՛,
— և ասիկա բացորոշ ճշմարտութիւն մըն է արդէն, — կին գրողները

նշանակելի մասնակցութիւն մը չունին մեր գրականութեան, կամ
 աւելի՛ մեր լրագրութեան, եթէ «գրականութիւն» բառը շատ խոշոր է
 իր առումով: Բացի այն հաղուադէպ ծանօթ դէմքերէն, որոնք իրենց
 անցեալ կամ ներկայ հեղինակաւոր գործունէութիւնով որոշ դեր մը ու
 դիրք մը ունին մեր գրականութեան մէջ և որոնց նոր արտադրու-
 թիւնները չէ՛ որ ղերենք անունի մը, համբաւի մը ու հեղինակու-
 թեան իրաւունքի մը պիտի տիրացնէ, կա՛յ անդին կին գրողներու
 ցանցաւ թիւ մը, որուն անդամները լրագրական ասպարէզին
 վրայ կ'երեւան պատահաբար կամ յարատեւօրէն, ամէն անգամ երբ
 իրենց ներշնչումը թելադրէ վեր առնել գրիչը: Յայտնի է նաեւ թէ՛
 պզտիկ թիւ մը կը կազմէ դասակարգը այս գրողներուն: Ասոնք գրա-
 կան ասպարէզի պատնէշին վրայ գտնուողներն են, որոնք իրենց
 կարելին կ'ընեն՝ իրենց յաջող կամ անյաջող արտադրութիւններով,
 առաջնորդուած կա՛մ օգտախնդրութեան գաղափարականէ մը, կա՛մ
 երեւալու տենչէն, կա՛մ գրական փառքերու հետապնդութենէն: Ասոնց-
 մէ դուրս, կա՛ն նաեւ անոնք, — տաղանդով, ձիրքերով, գրական
 պատրաստութիւնով, ընդունակութիւնով աւելի՛ օժտուածները, աւելի՛
 կարողները, — որոնք լուռ չեղող քացումի մը մէջ կը մնան, անծանօթ
 հանրութեան, անծանօթ գրական աշխարհին, անմասնակից գրական
 խլրտումին, առանց իրենց գոյութենէն նշոյլ մը զգացնելու, հոգ չէ թէ
 ամէն կերպով աւելի՛ ընդունակ ըլլան ու իրաւունքի տէր՝ գրիչ շարժե-
 լու, աւելի՛ կարող իրենց ձայնը լսելի ընելու, քան ուրիշ տհաս միջակ-
 ներ, որոնք գրիչով թուղթով մը մէջտեղ ինկած՝ մէկ կամ միւս էջերու
 մէջ կը մրտեն ու կը մրտեն, ամէնէն՝ թեթեւ, ամէնէն՝ մոտի, ամէ-
 նէն՝ թափթփած, ամէնէն՝ տափակ ու միամիտ նիւթերուն վրայ, առանց
 մտածելու, առանց հոգ ընելու թէ՛ իրենց այդ անարժէք արտադրու-
 թիւններով չպիտի կրնան հարիւր տարիէն ալ համբաւ մը կամ անուն մը
 շահիլ, ինչ որ թերեւս իրենց առաջնակարգ մտահոգութիւնը ըլլայ:
 Հաւաքաբար, կիներէն գրողներու և չգրողներու ամբողջութեան թուա-
 կան ու որակական արժէքը՝ չկազմեր գրական որոշ ուժ մը՝ գոհա-
 ցնող իրենց մասնակցութեան պահանջը մեր գրականութեան, դո՛նէ
 ակնկալուած համեմատութիւնով մը: Այս պայմանները կը ներշնչեն սա
 հարցումը թէ՛ ինչո՛ւ ուրեմն մեր լրագրութիւնը բաւարար կերպով
 բեղուն չէ՛ կարող ուժերով, և ի՛նչ բան ձեռնպահ կը թողու անո՛նք,
 որոնց մուտքը ու մասնակցութիւնը նշանակելի խլրտում մը պիտի
 ծնցնէր մեր կին գրիչներու գրականութեան մէջ, երբ արդէն գրական
 գործունէութեան մը վրայ գտնուողներէն դուրս՝ կարողութիւնները չէ՛
 որ կը պակսին: Մէկ էական արգելքի մը մէջ կարելի է փնտռել պատճա-
 րը այս չեղող քացումին: Ապահովաբար գրականութեան սէրը ու եռանդը
 չեն որ՝ կը կասեցնեն թո՛իչքը այդ անծանօթ ու ինքնամիտ գրիչնե-

րուն։ Հանդէպ գրականութեան մշակումի՝ հանրութեան կողմէ անուցուած մոլար հաւատքին անքաջալերիչ բնոյթն է որ՝ մեծագոյն թումբը կը դառնայ կին գրիչներէ շատերուն առաջխաղացութեան։ Աւանդական նեղմիտ ըմբռնումներ, նախապաշարում, կարճատես հայեացքներ, — որոնք սիրելի աւանդութիւններու պէս սերունդէ սերունդ փոխանցուած են և խոր ճիւղաւորումներով արմատացած ժողովուրդին միտքին մէջ, — անդիմադրաւելի պատուարներ են որ՝ կին գրիչներէ ամէն անոնք՝ որոնք գրական պարասումներու նուիրութեաւ եռանդը զգան՝ մէկ թափով կասին իրենց ընելիք շարժումին մէջ, խրոչելով այդ ձեռնարկին առթելիք տպաւորութիւնէն։ Այդ ըմբռնումներուն համաձայն՝ մտածել որ աղջիկ մը կամ կին մը՝ որ կը գրէ, գրական ասպարէզը կ'իջնէ, կը խօսի հանրութեան, իր ձայնը լսելի կ'ընէ, գրիչ կը շարժէ, մերկացած կը նկատուի այն լրջութենէն՝ զոր մունջ ու անշարժ լռութեան մը մէջ միայն կը կարծեն դասել։ Կեզծ պարկեշտութեան, սխալ համեմատութեան անունով հռչակուած մոլար վարդապետութիւն մըն է աս՝ զոր ժամանակը ու ըմբռնումները նուիրագործած են ալ։ Կը մնայ նաև մեր գրական ասպարէզին մէջ տիրող լրջութենէ հեռու այն բարոյականին վախճ՝ որ այդ գրիչներուն համար պատահասի մը չափ ահաբեկիչ է։ Չէ՞ որ նոր կին՝ դէմք մը գրական բեմը ոտք դրած ատեն, ամէն ուրիշէ աւելի ենթակայ է այն անիրաւ նշաւակումներուն ու հեզմանքներուն, զորս մենաշնորհ ըրած են իրենց ծաղրելի զուարճաբանութիւններով թեթեւաբարոյ գրիչներէ ոմանք։ Ինչպէ՞ս կ'ուզուի այս պայմաններուն մէջ որ, կին դէմք մը՝ որ իր արժանապատուութիւնը ու անունը կը յարգէ, կարենայ աներկելու ու անձնավստահ քայլերով բեմ առաջանալ, երբ գիտէ թէ իր գլխուն ցանուելիք փուշերուն մէջ չափտի գտնուին մէկ քանի վարդի թերթեր իսկ, մոռցնող վէրքին ցաւը փուշի խայթոցներուն։ Ասանկով, իր պարկեշտ անունին, կնոջական անբծութեան վրայ փշապսակի մը արատը բերել չուզող ամէն կանացի նոր գրիչ՝ որ փափաքը զգայ գրիչի ասպարէզը նետուելու՝ կը նախընտրէ լուռ չեղութեամբ մը մէջ փնտռել իր հաճոյքը, քան գլուխը դնել այն փորձութիւններու աւետարանին տակ, որուն պարզեւած մասնակի հաճոյքները չեն կրնար երբեք փոխարինել անիրաւ հալածանքներուն, կոշտ ու տմարդի դատափետութիւններուն, նշաւակումներուն դառնութիւնները։ Անկախաբար բոլոր ասոնցմէ, կարելի՞ է մոռնալ ու աչքի առջեւ չունենալ՝ առանձնաբար՝ հանրութեան դատաստանը, որ իր կարգին քիչ անհանդուրժելիներէն չէ։ Մէկը ազէկ կը խօսի, միւսը գէշ, ուրիշ մը կը ըստմբասէ, աւելի ուրիշ մը մեկնութիւններ կը գտնէ դրուածքին մէջ, և կը զառանցէ մտացածին լանդազուանքներու վրայ։ Երեւակաւ եւ որ՝ այսօր մեր մէջ կին մը կամ աղջիկ մը, չկրնար սիրային հաւ-

ուած մը ստորագրել, ըլլա՛ր ան ամէնէն անանձնական ձեւին տակ : Գրուածքի մը նիւթը հեղինակին կը վերագրուի միշտ, և վա՛յ ան գրողին՝ որ ստորագրած է քիչ մը գայթակղեցուցիչ ու խիղախ նիւթ մը, խնդիր չէ թէ իր անձը ու կեանքը փարսախնեցող հեռու ըլլան զայն մարմնացնելէ :

Իրենց սկզբունքովը գո՛նէ երեւութապէս հիմնաւոր այս պատուարները, ամրակուս թումբերու պէս կ'արգիլեն կին գէմքերու մուտքը մեր գրականութեան մէջ : Անոնք կը խրտչին ու կը կտտին իրենց թռիչքին ու ճշմարտապէս անկեղծ եռանդին մէջ . ոմանք կը փորձեն ոտստում մը՝ ու կ'անցնին թուիրը, չուտով դասայիք ըլլալու համար . ուրիշներ, — ասոնց մէջ ըլլալով ամէնէ՛ն աւելի կարօշները, — կը նախընտրեն չեզոքացումը, մեկուսացումը, ինքնափոփումը, — յաճախ թերեւս մեծ գառնութիւնով ու զոհողութիւնով, — և կը թաղուին անշուշտ լուսթեան մէջ, ոչի՛նչ զգացնելով իրենց գոյութեանէն, անձանօթ ու անմասնակից մնալով մտաւորական աշխարհին ու գրական շարժումին . գրականութիւնը կը կորսնցնէ մասնակցութեան ուժը իր այն գործիչներուն՝ որոնք նշանակելի օժանդակներ կրնային ըլլալ : Ու ամէն կողմ կը լսուի շարունակ յաւիտենական զանգատի այն յանկերգը թէ՛ ինչո՞ւ կին գրողներ քիչ թիւ մը կը համրեն մեր մէջ, թէ ինչո՞ւ կարողագոյններ ձեռնպահ կը մնան և իրենց օժանդակութեան բաժինը չեն բերեր կանացի գրականութեան ըուրաստանին, իրենց միտքին գունագեղ ու նախշուն ծաղիկներով :

Անե՛լ յանկերգ !!

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՆՈՐ ՊԱՐԳԵԻՆԵՐ

«ՄԱՍԻՍ» Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Մասիս ծանօթ պարզեւաւոր բաժանորդագրութիւնը, — որ իր նորութեամբը մեծ ընդունելութեան արժանացաւ, և որով խմբագրութիւնս փափաքը ունեցաւ զրական գեղեցիկ հատորներով օժտելու իր բաժանորդներուն մօտենադարանը, բացառիկ զոհողութեամբ մը, — կ'աւարտի այս թիւով . Միշտ մեր բաժանորդները իրենց բաժանորդագրութեան հետ սիրուն պարգեւներով օժտելու փափարով և չգրկելու համար . նոր բաժանորդագրողները՝ մասնակցելու առիթէն պարգեւներուն, այս թիւով կը հաստատենք ուրիշ պարգեւներու դրութիւն մը՝ որուն վրայ զաղափար պիտի տանք մօտաւոր թիւով մը . ֆետրվար մէկէն մինչեւ մարտ 15 **Մասիս** բաժանորդագրող բոլոր բաժանորդներ, ձրիաբար պիտի ստանան մեր նոր պարգեւը, որ իր գերազանցապէս հրապուրիչ հանգամանքով՝ կարող է զրաւելու համակրութիւնը ամէնէն դժուարահաս ընթերցողին . Ամբողջ տարի մը **Մասիս** Գրական Շարժամբերմին հետ՝ ամենասիրուն պարգեւի մը տիրանալուն առիթը՝ **Փախան** միմիայն 60 դրշի՝ պատճառ մըն է որ ընթերցողներ **Փախան** իրենց **Կանխիկ** բաժանորդագրութիւնով արձանագրուիլ **Մասիս**, առանց սպասելու մեր պարգեւներու յայտնումին, ժամանակին նպատատւորելու համար անկէ . Ամիսուկէտուն պայմանաժամը՝ **լայն առիթ** մըն է ամէնէն հեւաւոր տեղերու ընթերցողներուն համար՝ կարենալ հասցնելու իրենց բաժանորդագիրը, որպէսզի չի կորսնցնեն պարգեւներուն տիրանալու առիթը . Այդ պայմանաժամէն ետքը հասնող բաժանորդագրութիւններ՝ անմասնակից կը մնան պարզեւաւոր բաժանորդագրութեան վստահ ենք թէ **Մասիս** բաժանորդագրութեան մէջ մտցուած բաժանորդներու համար մեծապէս շահաւէտ այս առիթն ալ պիտի ողջունուի այն համակրութեամբ՝ որով ողջունուեցաւ զիրքերու պարգեւի մեր նախորդ պայմանը :

ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

«ԱՇՈՒՂ»Ը, Յ. ԶԻՆՃԵՐՃԵԱՆ, ՅԱԿՈԲ ՈՍԿԱՆ

Գ.

Օր մը՝ Զինճիրճեանի հետ՝ Եիւքսէք Քալաբրըմի այդ կրպակը եկաւ ուրիշ ծերունի մը որ իր կարգին այնքան պաշտելի դէմք մը պիտի դառնար մեզի համար։ Երկուքն ալ խնդալով ներս մտան խանութէն որ կատարեալ թռչնաւոր մը դարձած էր իրիկուան արձակուրդի այդ պահուն, — այնքան չափաւոր, խնդում ու ճառողուն տղաք, գրեթէ ամէնքն ալ դպրոցականներ, եկած թաւած էին գրքերուն վրայ, կը վերցնէին ու կը ձգէին զանոնք անդադար՝ ուստոսելով ու պոռչտալով՝ ճիշդ անակնկալ կեր մը գտած ճնճղուկներու երաժի մը պէս։

Կ'երեւայ թէ այդ տեսարանը մասնաւորապէս հաճելի էր Զինճիրճեանի ընկերացող ծերուկին, որովհետեւ՝ հազիւ դրան սեմը անցած՝ հիացիկ ու երանաւէտ աղաղակ մը արձակեց, և իր առաջնորդին դառնալով՝ ըսաւ.

— Ի՞նչ է աս, Յարութիւն էֆէնտի, դուն խանութ կ'ըսէիր՝ ես Աստուծոյ արքայութիւնը կը գտնեմ։

— Եւ տակաւին ամբողջ չեն, պատասխանեց Զինճիրճեան։

— Իրաւ, չա՛տ աղէկ, չա՛տ աղէկ, յարեց ծերուկը, և եկաւ նստաւ քիչ շատ տոկուն աթոռի մը վրայ զոր Աշուղը փութկոտութեամբ իրեն երկարած էր։

Զինճիրճեան մասնաւոր, յատուկ յարգանք մը ցոյց կուտար նորեկին, ինչ որ մեր աչքին աւելի պատկառաղդու կը դարձնէր անոր թէեւ խիստ՝ բայց նոյն ատեն ալ անուշ ու սիրաւէտ դէմքը։ Աղբնկ ու թաւ յօնքերուն տակէն՝ աշուղները կը վառէին կուսական պայծառութեամբ, և երբ անոնց շողքը հագած ակնարկներ կուգային մեր վրայ կը թառէին, մեզի անա՛նկ կը թուէր թէ գորովի ու գրգանքի մթնուրտ մը մեզ կը գրկէ, կը հմայուէինք ու կը վերանայինք, նոյն իսկ տեսակ մը անբացատրելի վախով կը համակուէինք անոնց աղգեցուցութեան տակ՝ ինչպէս միսթիք հոգիներ կը սարսուան խունկին գրաւող ու պակուցիչ ոլորտներուն մէջ։ Պարզազգեսաց ու պարզասէր մարդ մըն էր, չէր անորոշեր երկար բարակ ձեւակերպութիւններէ, ոչ իսկ տարիքին զանազանութիւնը կ'ուզէր զգալի դարձնել իր խօսակիցներուն։ Առաջին անգամ տեսնող մը՝ եթէ անոր աշուղներէն ցայտող իմաստութեան կայծերուն չհաղորդուէր, թերեւս սովորական արհեստաւոր մը կամ խանութպան մը կարծէր զայն։ Բայց այդ անպաճոյճ, գրեթէ անհրապօր արտաքինը իսկոյն կը մոռցուէր՝ երբ կը սկսէր խօսիլ, երբ մանաւանդ խօսակցութիւնը կ'ոգեւորէր զինքը։ Այդ պահերուն՝ գրեթէ

մինակը կը խօսէր, որովհետեւ անսահման բան ունէր ըսելիք, որովհետեւ մանաւանդ իր խօսքը գիւթիչ էր առուակի մը գիւղիւն պէս, և համեղ՝ ինչպէս մեղրը: Միշտ լուռ կը մնային քիչ մը աւելի վայելելու համար այդ անուշիկ ասուլիսը որ քանի՛ կ'երկարէր, այնքան որոշ ու յայտնի գծերով երեւան կը հանէր պատուական սիրտ մը, ճշմարիտ գոհար-սիրտ մը, և հմուտ ու բարձր միտք մը, զոր տարիներու աշխատութիւնը կռելով կռելով իտէալ կատարելութեան մը հասցուցած էր: Կարծես հարազատ պատկերն էր վաղընջուց առակագրի մը որ Եզովբոս կը կոչուի, և զոր ինքն իսկ երգած էր մեր օերունդին դպրոցականներուն չա՛տ ծանօթ ոտանաւորով մը.

Ինչպէս են բիրտ խեցեաց մէջ
Փակեալ անգին մարգրիսի,
Անգեղ մարմնոյն մէջ բնութիւն
Փակեց մեծ սիրտ եւ խոր միտք:

Զինքը անդամ մը տեսած էի 1890ին՝ Մեղպուրեան վարժարանին մէջ՝ բարձրաստիճան եկեղեցականներու, ուսուցիչներու, երկսեռ հանգիսականներու և աշակերտներու բազմութեան մը հետ: Այն ատեն՝ Բերայի Նարեկեանին կ'աշակերտէինք, և մեր կրթութեան յատկացուած դաստիարակներուն մէջ կը դռնուէին գոնէ մէկ երկու հատ՝ որոնք պաշտօնակիցներու զնահատութիւնը առիթ չէին դարձնել էսնափական հասարակ նկատումներու և հաշիւներու կարգադրութեան, այլ ընդհակառակը՝ կը սիրէին անոնցմէ արժանաւորները իրենց մանուկ աշակերտներուն ներկայացնել իբր յարգելի ու նուիրական երախտաւորներ: Եւ ապահովաբար գէշ չէին ընել, որովհետեւ՝ ուրիշ երախտաւորներ յարգել սորվեցնելով, վերջ ի վերջոյ իրենց իրաւունքը եղող երախտիքն ալ կը ստանային:

Լաւ չեմ յիշեր թէ ո՞րն էր, բայց վերջապէս այդ մէկ երկու հազուագիւտ ուսուցիչներէն մէկը օր մը երկարօրէն մեզի խօսած էր Մեղպուրեան էֆէնտիի, ինչպէս նաև ուրիշ մէկ երկու յիշատակելի ուսուցիչներու՝ մասնաւորաբար Թորոս Նազարեանի վրայ, և անոնց դործունէութիւնն ու ապերախտ ասպարէզի մը սիրոյն տարած յոգնութիւնը նկարագրած էր յուզիչ ու սրտազրաւ կերպով մը: Վերջինները մեռած զացած էին, բայց Մեղպուրեան ողջ էր, տակաւին կը մաքառէր՝ առանց ազգին վրայ բեռ ըլլալու, առանց բռնի պաշտում, բռնի գովասանք և մուրացածոյ աշակցութիւն սպասելու, մի՛ միայն իր աշխատութեան ու զրկանքին գնով: Բաւորդ դար մը կար որ կը դիմանար այդպէս, և տեղական թերթ մը որ պատահաբար մեր ձեռքը անցած էր այդ օրերը, կը ծանուցանէր թէ քսանընչինգամեակի հանդէս մը պիտի կատարուի ի յիշատակ այդ յամառ ու արդիւնաւոր դործունէութեան, որ քանի՛ զոհողութեամբ ու անձնուրացութեամբ առաջ տարուած՝

այնքան նաև արդիւնաւոր դարձած էր: Եւ անա՝ խումբ մը տղաք որոշեցինք այդ հանդէսին երթալ՝ ի դիմաց մեր ընկերակիցներուն համակրութիւն յայտնելու համար կրթութեան վաղեմի մշակի մը զոր մեր դաստիարակը ճշմարտապէս արժանի կը նկատէր դպրոցական սերունդին երախտագիտութեան:

— Խնդիր չէ թէ դուք ուղղակի չէք օգտուեր՝ ըսած էր մեզի, կը բաւէ որ դուք ալ անոր կրթած սերունդին մաս կը կազմէք. տարբեր դաստիարակներու սերմանած բարի հունտերը, որոնք միեւնոյն ժամանակ պիտի ծլին ու ծաղիկ բանան՝ անպատճառ իրարու պիտի աշակցին, իրար պիտի գնահատեն ու վարձատրեն: Ուրիշ բան է զարգացածներու մէջ զարգացած ըլլալ, ուրիշ բան է անզարգաներու մէջ զարգացած ըլլալ: Ճշմարիտ զարգացեալներ պէտք են զարգացման արժէքը գնահատելու և զայն վարձատրելու համար: Որովհետեւ իրենք ալ աշխատած ու չարչարուած են իրենց կարգին, և լաւ գիտեն թէ ի՞նչ գնով, ի՞նչ զոհողութիւններով կարելի է ձեռք բերել այդ զարգացումը: Մինչդեռ տգէտներէ բաղկացած սերունդի մը մէջ՝ զարգացման յարգը ճանչցող չըլլար որպէս զի զարգացեալը իր աշխատութեան ու տքնութեանց պտուղը քաղէ լիապէս:

Այս խօսքերը մանաւանդ մեզի գրգիւ եղած էին մեր որոշումը գործադրելու: Չորս կամ հինգ տղաք էինք հոկտեմբերի այն երկուշաբթին, անցանք դիմաց, և հետիոտն՝ գրեթէ արշաւելով հասանք Մեղպոլսեան վարժարան, աշխոյժ ու ոգեւորուած: Նոյն իսկ ուղերձ մըն ալ պատրաստած էինք, և մեզմէ մէկը պիտի կարգար զայն Նարեկեանի աշակերտներուն անունով: Բայց երբ վեր՝ սրահը ելանք և պատկառազգու բաղմութեան մը հետ դէմ առ դէմ եկանք, չեմ գիտեր ինչո՞ւ մեր համարձակութիւնը ցնդեցաւ գնաց: Տղաք չա՛տ կային այնտեղ, մենք ալ անոնց խառնուեցանք, չա՛տ ծափ զարկինք, բայց չկրցանք մեր կողմէ բան մը ըսել, և ուղերձն ալ գրպաննիս մնաց:

Մերուկը՝ զոր Զինճիրճեան գրաստուն բերած էր՝ այդ օրը տեսած էի Մեղպոլսեանի սրահին մէջ՝ ուր ամէնէն աւելի ծափահարուած ճառերէն մէկը արտասանեց և ուր իր մէկ քերթուածը երգած էինք վարժարանին աշակերտուհիներուն ընկերակցութեամբ: Եղանակը ողբացեալ Չուհաճեանի գործն էր, ցնցող ու ոգեւորիչ, աշակերտուհիներուն ձայնակցած էինք որոտագին խանդավառութեամբ մը, առանց գիտնալու թէ անոր հեղինակը մեր մէջ կը գտնուի: Կարելի՞ էր այդ համեստուկ և հանդարտիկ ծերունիին վերագրել այդ աստիճան տալաւորիչ ու պճրթկուն քերթուած մը:

* * *

Երբոր նստաւ, միջոց մը իր հետախուզող ակնարկը պտտցուց կրպակին մէջ, ձեռքին տակ դստնուող քանի մը հատոր թղթատեց և կրկին

մեզի դարձաւ, անանկ ատեն մը՝ ուր օսմանեան ճարտարապետութեան նուիրուած հատոր մը ձեռքերնիս՝ առապիսի գարդանկարներու հրաշալի ու նրբին ազուցուածքին վրայ կը զմայլէինք:

— Ի՞նչ կը դիտէք, տղա՛ք, հարցուց յանկարծ մեզի:

Գիրքը իրեն տարինք:

— Սքանչելի՛, սքանչելի՛ արուեստ ունեցած են մարդիկը, ըսաւ՝ իր կարգին հիացիկ ակնարկ մը նետելով մեր աչուրները կարթող էջին վրայ:

Յետոյ՝ խօսքը մեզի ուղղելով, և առանց նայուածքը գրքէն բաժնելու՝ յարեց.

— Որովհետեւ դէմքի վրայ չեն աշխատած՝ իրենց բովանդակ արուեստը զարդանկարներու նուիրած են, ասոր համար է որ բոլոր գեղարուեստական ոճերուն մէջ առապիսի միշտ առաջին հանդիսացած է իբր հոյակապ ու նրբախիղճ աշխատութիւն: Յետոյ՝ մարդիկը նշանաւոր չափագէտներ եղած են նոյն ատեն, և իրենց արուեստն ալ մաթեմատիքական խնդրի մը պէս կնճռոտ ու զգուարամբն է, անսահման հմտութիւն ու համբերութիւն կը պահանջէ, և նոյն իսկ միակ կէտի մը, միակ գիծի մը սխալը կրնայ ամբողջ գործը խանգարել: Այսպէս չէ՞ նաեւ մաթեմատիքական հաշիւներու մէջ:

Գեղարուեստի առաջին դասն էր դոր կը ստանայինք այդ օրը: Ան տակաւին երկար խօսեցաւ, գեղարուեստը բացատրեց մանաւանդ իբր բարոյացուցիչ տարր մը որ մարդկային գործունէութեան և քաղաքակրթութեան յառաջացման մէջ ամենամեծ դերերէն մէկը խաղացած էր, Զինճիրճեանի մէկ ընդմիջման առթիւ խօսեցաւ նաեւ Այվազովսքիին վրայ՝ որուն նկատմամբ անսահման հիացում ունէր, և ի վերջոյ՝ մինչդեռ մեկնելու կը պատրաստուէր՝ յարեց, միշտ խօսքը մեզի ուղղելով.

— Տղա՛քս, սիրեցէ՛ք գեղարուեստը, որովհետեւ կրօնքէն վերջ ամէնէն բարձր բանն է անիկա... ես ասանկ կը խօսիմ նաեւ իմ աշակերտներուս, և եթէ այսօր իրենց հարցնելու ըլլաք թէ իրենց ի՞նչ ազուր բան սորվեցուցած եմ, ամէնէն առաջ ասիկա պիտի յայտնեն...

Իր աշակերտներուն... ուրեմն ուսուցիչ մըն էր այդ ծերուկը: Բայց ո՞վ էր, ո՞ւր կը դասախօսէր:

Այս հարցումներով չրջապատեցինք Զինճիրճեանը՝ երբ քանի մը քալ իր հիւրին ուղեկցելէ վերջ կրկին խանութ գարձաւ: Մեր հարցումը զինքը քարացուց: Ապշահար նայուածք մը նետեց մեր վրայ, և ըսաւ՝ զարմացկոտ շեշտով մը.

— Տղա՛քս, ամօթ չէ՞ ձեզի:

Գլուխնիս խոնարհեցուցինք, իսկապէս ամօթահար ու անհանգիստ: Իր շեշտին մէջ այնչափ յանդիմանութիւն կար որ մենք ճշմարտապէս մեղապարտ զգացինք ինքզինքնիս, թէեւ առանց գիտնալու թէ ի՞նչ յանցանք գործած էինք:

—Ամօթ չէ՞ ձեզի, յարեց... դուք դպրոցական ըլլաք և Յակոբ Ոսկանը, Ոսկի Վարժապետը չճանչնա՞ք...

Անկէ ետքը շատ առիթներ ունեցանք Ոսկի Վարժապետը աւելի լաւ ճանչնալու։ Երախտաւոր մըն ալ ինքն էր, բազմաբղիւն ու արժանի, և շատ սէր ու համակրանք տեսաւ մեզմէ այդ կրպակին մէջ՝ ուր երեք հատ եղան։ Որովհետեւ շաբաթը քանի մը անգամ կը հանդիպէր։ Միշտ նոյն համեստ ու պարզասէր մարդն էր, — ինչպէս մնացին արդէն Աշուղն ու Զինճիրճեանը։ Երեքն ալ սքանչելի յարմարութիւն կ'աւնէին ո՛չ միայն իրարու, այլ նաեւ այդ անպաճաճ կրպակին հետ որ իր պարունակած իմաստութեան ընդունարաններովն էր մեծ, ինչպէս իրենք ալ մեծ էին իրենց հոգուով, իրենց սրտովն ու մտքով։

* * *

Յակոբ Ոսկան և Զինճիրճեան որքան ալ միեւնոյն գիծին վրայէն ընթացող զուսաւորեալ շներ էին, բայց կրկին մեծ դանազանութիւն ունէին իրարմէ։ Զինճիրճեան աւելի՛ կրքի մարդ էր քան Ոսկանը, կողմնակալ ու աններող էր, և յաճախ ա Քրիօրի համոզումներու պատրուակ կու տար իր սրտին պաշտելի ազնուութիւնն ու բարութիւնը։ Աղուոր հեգնել գիտէր, և իր խայթիւնը երբեմն այնքան անողոք ու անկարեկիր էր որ այլեւս անբուժելի կը դառնար։ Երկար տարիներ Երուսաղէմի Ս. Յակովբեանց վանքը մնացած էր իրր ուսուցիչ ժառանգաւորաց վարժարանին ուր անմոռաց յիշատակ մը թողած է, իրեն աշակերտ ունենալով Ս. Յակովբեանց միաբանութեան պատկանող շատ եկեղեցականներ, կարծեմ նոյն իսկ Կիլիկիոյ արդի չնորհազարդ Կաթողիկոսն ու Երէցեան Գէորգ Սրբազանը։ Մասնաւոր համակրութեամբ կը խօսէր Մագսուտեան Աւետիք վարդապետի մասին, ու կ'ըսէր յաճախ.

— Եթէ Աւետիք վարդապետ և ուրիշ քանի մը արժանաւոր միաբաններ չըլլան պէտք է յուսահատիլ այդ վանքէն։

Արդէն կզերը չէր սիրեր, և այդ անսիրելութիւնը պատճառ կը դառնար որ շատ անգամ բաղխին Ոսկի Վարժապետին հետ։ Կը յիշեմ կարդացած ըլլալ Ոսկանի մէկ ճառը՝ որ սրտագին պաշտումն իսկ էր կրօնքին, և որուն մէջ կ'ըսէր թէ մեր դաստիարակութեան ինքնուրոյն հանգամանք մը տալու համար յատուկ տարր մը պէտք է, և այդ տարրը միայն կրօնքը կրնայ ըլլալ։ Երբոր սրտերը միօրինակ կերպով զգան թէ պէտք են յարգել կրօնքը, այն ատեն աւելի լաւ ճանչնալ պիտի ուզեն զայն, պիտի գիտնան թէ ինչ արժած է ան մեզի, մեր նախնեաց, և ահա միեւնոյն զգացումները, միեւնոյն մտածումներն ու իտէալները պիտի յայտնուին իւրաքանչիւրին ալքերէն, պիտի ձուլուին ու նոյնանան իրարու հետ։ Եւ զգացումներու նոյնութենէն պիտի ծագի նաեւ դաստիարակութեան նոյնութիւնը. այդ կերպով միայն կարելի պիտի ըլլայ դպրոցական տղոց սիրտը բարի, միտքը սուր ու ձեռքը

ճարտար դարձնել: Կրօնքին շնորհիւ կրօններ ենք քաղաքակիրթ ազգե-
րու կարգը անցնիլ, քաղաքակրթութեան բարիքը վայելիլ ու տարածել:

Այս համոզումը ունեցող մարդու մը՝ բնականաբար դիւր չպիտի դար
Զինճիրճեանի աննկատ լայնախոհութիւնը:

—Բայց սխալ է, սխալ է, կը գոչէր յուսահատութեամբ, անհան-
դիստ նայուածքներ ուղղելով մեզի:

Զինճիրճեան երբեմն կը միտէր տեղի տալու, բայց ո՛չ՝ առանց
պայմանի:

—Կրօնքը աղէ՛կ, կը պոռար իր կարգին, ըսելիք չունիմ, բայց
կզե՞րն ալ...

—Անշուշտ... երկուքն ալ անբաժան են իրարմէ:

—Ո՛հ, ո՛չ, ո՛չ...

Ինչո՞ւ այդպէս կը հակակրէր կզերին: Շատ առիթներ ունեցանք իր
այդ անսիրելութեան հաղորդուելու, բայց պատճառը չգիտցանք:
Կ'ատէր մանաւանդ տէրտէրները, և այդ ատելութիւնը այնքա՛ն արմա-
տացած էր իր քով, որ անոնց դէմ գրուած ու ըսուած շատ բաներ
գոց ըրած էր, կ'արտասանէր անպատու հրճուանքով ու հեգնութեամբ:

Ահաւասիկ քառեակ մը, կարծեմ Գաբրիէլ Նպիսկ. Այվազեանի
առակներէն.

Սար ու ձոր՝
Տէրտէրի փոր.
Որքան որ թաք
Կ'ասէ՛ տ'ը, տ'ը:

Եթէ երբեք Ոսկան այնտեղ գտնուէր՝ անպատճառ կ'այլատէր չէզո-
քացնել այդ քառեակին ազդեցութիւնը, քանի մը տուն արտասանելով
Ազամեանի «Խեղճ Տէրտէր»էն՝ և զոր մենք ալ գոց ըրինք վերջ ի
վերջոյ, այնքան առիթ ունեցանք լսելու.

Անգարդ է իւր խրքիկն համես
Խարխուլ սեղան, մի անկողին՝
Որի տակը մնայ ի պահես
Փոք ու փայտեայ աղիւս արկղիկ,
Ուր մի քանի ցնցոսիք կան
Ու երկու հաս մաշուած շապիկ:

Բայց ահա Զինճիրճեան ոտքի կ'ելլէր, և քառեակը կրկին կը լսուէր,
այս անգամ աւելի՛ շոնդալից, աւելի՛ կրքով ու հեգնութեամբ: Ու
Ոսկան կը շարունակէր:

Մինչ մենք բազմահաց
Կը վայժենք սեղան ու կ'ապրինք շուայս,
Ուռած, յողիացած,
Ամէնն իւր տեղին, Ջաւիկն կարմրախայս
Հաւկիթն, Երեկիկ,
Ծերնդեան քաղցրեղէն, ընծայք զամաղան,

Հապա տեղե՞րք՝
 Որ եկեղեցւոյ ի վերջ աւարտման
 Մըսնէ իւր խոցը,
 Ուր ունի չոր հաց՝ իւր միակ բաղարջ,
 Եւ պրոքսոր ջրի
 Մի կողմից հայքած հողեղէն մի փարջ,
 Կրօնք մ'ոսկորի...

— Ի՞նչ կ'ըսես, Ոսկա՛ն էֆէնտի, կը գողար Զինճիրճեան, հիմայ տտանկ տէրտէր չէ մնացած, հիմակուան տէրտէրներուն որքան որ առա՛ կ'ապեն տո՛ւր տուր... Ես Համուսնացայ որ վրաս ձեռք չ'ընեն...

*
*
*

Երբոր ոտանաւորները սպառէին՝ տէրտէրներու այդ կատաղի հակա-
 աւորդը կ'անցնէր անհրճողներու, և շատ ալ առատ պաշար մը ունէր
 անոնցմէ, քաղուած հիներու պատմուածքներէն, ինչպէս նաեւ մեր
 երբեմնի զաւեշտագիրներէն: Հատ մը մանաւանդ՝ շատ կը պատմէր,
 և այնքան ալ զուարճալի կերպով մը որ չեմ գիմանար այստեղ մէջ
 բերելու փորձութեան:

Անգամ մը, իր իսկ բառերով, մեծ-մօրուք՝ տիտօն-մօրուք, մեծ-փոր,
 նեղ-փոր, երկայն-հասակ՝ կարճ-հասարակ, կօճկած-փէշ՝ սալլար-փէշ,
 գօլա-եախա՝ եաղլը-եախա, կոկորդաձայն՝ չաթլախ-զուրնա, գոց-բերան՝
 մաղաղա-բերան, տաղ-գլուխ՝ տան-կլոխ, տանկուտի՝ անկուտի, սըվա-
 ճի, եօրդանճի, քօնսօլիտճի տէրտէրցուներ կը դիմեն Շիրակայ առաջ-
 նորդ Տ. Յովհաննէս արքեպիսկոպոս Ռչտունիի, և կը խնդրեն որ
 զիրենք քահանայ ձեռնադրէ:

Ամէնքն ալ ոչ մէկ ուսման տեղեակ են, բայց լաւ գիտեն որ Արքե-
 պիսկոպոսը զրամը կը սիրէ, և առաջուց՝ կանոնական հնչուն աջհամ-
 բոյրը մատուցած ըլլալով, հանդարտ ու ապահով քննութեան կը
 ներկայանան:

— Տօ, տղէ՛ք, կարդալ գիտէ՞ք, կը հարցնէ Արքեպիսկոպոսը:

— Ծառայ ենք Սրբազան:

— Սաղմոսն ըզորդ կրնա՞ք կարդալ:

— Ծառայ ենք Սրբազան,

— Ուղիղ գիր կը գրէ՞ք:

— Ծառայ ենք Սրբազան:

Այն ատեն՝ Արքեպիսկոպոսը նշան կ'ընէ փոքրաւորին որ թուղթ աւ-
 գրիչ կը բաժնէ ընծայացուներուն:

Ամէնքն ալ կը պատրաստուին գրելու:

— Տօ՛, տղէ՛ք, կ'ըսէ արքեպիսկոպոսը, ձեզ բան մ'աւետ գրեցէ՛ք,
 ո՛վ ըզորդ գրէ օծման առջի կարգ անոր պիտի տամ... գրեցէ՛ք նայիմ:
 Եւ հետեւեալ պարբերութիւնը տուն կուտայ անոնց:

«Զայր նենգաւոր պիղծ առնես դու Տէր»:

Ընծայացուները գրել կը ձեւացնեն, թուղթը պարապ ձգելով. մէկ հատը միայն որ մէջերնուն ամէնէն բանդէտն էր՝ քանի մը վայրկեան վերջ կը գոչէ.

— Ծառայ եմ Սրբազան, թուղթ պրծաւ :

Արքեպիսկոպոսը կ'առնէ գրուածը և չի կրնար քմծիծաղ մը զսպել՝ հետեւեալ կերպով այլախոյնուած տեսնելով իր տուն տուած պարբերութիւնը.

« Չայիր նէնկ անէօր փիղ ձայնիէս թիւ տըր » :

Բայց աջամբոյրը լեցուն տուած են :

— Արժանի՛ են, արժանի՛ են, կը գոչէ Արքեպիսկոպոսը, և շարաթը չլրացած՝ ամէնքը մէկ քահանայ կը ձեռնադրէ Կարսի Մայր-Եկեղեցիին մէջ :

Առաջին օրը որ այս մանրամէտքը լսեցինք, Ոսկան խանութը կը գտնուէր :

— Դո՛ւն ըսէ, Ոսկա՛ն էֆէնտի, աւելցուց Զինճիրճեան, քանի որ այս պայմաններուն մէջ տէրտէր կը ձեռնադրեն, ի՞նչ խեր կը սպասեն անոնցմէ :

Ոսկի վարժապետը կարճ կապեց, թերեւս վախնալով որ ուրիշ մանրավէպ մը կը յաջորդէ ատոր, ու մեկնեցաւ մրմուռով.

— Ի՛նչ ըսեմ, սկեպտիկ ես... »

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԼՈՎ ԵՐՈՐ ՍՈՅԼԸ

Ի՞նչ կ'երգէ,

Հովերու սոյն աւանապին :

Ո՛հ, ի՞նչ կ'երգէ հովերու սոյն աւանապին :

Լուսնակ, ո՛վ լուսնակ,

Սէ՛ն հիւանդ լուսնակ,

Որ բուխ ամպերու խոր պատառուածէն,

Գու լուստասի մաղձոս աչեքէն,

Սոյ շեղ նայումքիդ ցանցէն ճամուռակ,

Լուսեղէն լո՛ին արցունք կը բափես,

Զրո՛ւս, ի՛մ լուսնակ,

Հովերու սոյն աւանապին ի՞նչ կ'երգէ :

Որքա՛ն ճշում է ձայնն աղեկսուր

Հովերու շու՛ղջին,

Զրախտակն եւ սխուր

Հեծկլսանքն անհուն,

Որ կարծես եւեթ մ'է լայն ու ծաւալուն

Թրում կուրծքէն ոչինչին :

Ըսէ՛, ա՛յ լուսնակ,

Հովերու սոյն աւանապին

Ի՞նչ կ'երգէ :

Լուսնակն անու՛ս՝ իր դէմքին


Սարսուռ կուսայ մեղմազին,

Սե ամպերու շու՛ղջին ետեւ

Խուսափուկ ցարժամք կ'անցնէի բերել :

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՈՒՐՈՒԱԳԻՐՆԵՐ



I.

...Այն օրը, չգիտեմ ինչու, կամուրջին վրայ մէկ կողմ, կեցեր եմ ու կը դիտեմ տենդայոյդ մակընթացութիւնը ու տեղատուութիւնը մարդկային հսկայ կոհակին, որ գլխու պտոյտ տալու աստիճան արագօրէն կը թաւալի իր ջրվեժային ձայնովը, իր այլազան ու երկնային փոսփորացումովը: Յորդ ու կիզիչ արեւ մը կայ որ բարձրադիր հնոցը կը թուի ըլլալ կեանքի այս մեքենական շարժումին, այս զիկզակաձեւ հոսանքին: Մէկ պահուն, քովէս, գրեթէ արմուկիս քսուելով, մութացկան մը կ'անցնի: Կոյր է և մէկ ձեռքը ցուպին յենած, ճամբայ կը բնայ անով իր մոլոր ու անվտանգ քայլերուն, մինչդեռ միւս ձեռքը, ուրուականի ոսկրուտ ստուեր, օդին մէջ կը տատանի անդադրում ու անվհատ, աջ ու ձախ, ջղայնօրէն, իբր թէ աներեւոյթ և անգիտակից վտանգի մը պարագային, իր տխրած մարմինը պաշտպանած ըլլալու բնական կանխահոգութեամբ: Արգահատանքով, քայլերս կը մօտեցնեմ իրեններուն և ինքզինքս կ'ենթարկեմ վայրկենաբար մտքի այն քմածին ու ենթադրական արամադրութիւններուն որոնք այնքան ազէկ գիտեն խել մարդը վարդագոյն ու պայծառ հորիզոնի մը յափշտակութիւններէն, տանելու համար մութ ու խաւար վայրերու դառնութիւններուն ծոցը: Խաւարի բնակիչ մըն ալ այս կոյրը, կը մտածեմ, որ զրկանքով երեւակայած է ամէն տեսակ հրճուանքներ, առանց կատարելապէս եւ գուցէ բնաւ ճանչցած ըլլալու կապոյտ երկինքներու բոլոր գիւթութիւնները, ինչպէս որ կ'երեւակայէ նոյն վայրկեանին իր կիսամբկ ունի վար գաղջ վերարկուի մը թովշութեամբ իջնող արեւը, անոր փառաւոր լոյսը ու փարթամ չքեղութիւնը չի տեսած, չի վայելած: Յանկարծ, հակառակ կողմէն, նոյն ուղղութեամբ, ուրիշ մութացկան մը կ'երեւնայ, կը խոյանայ դուրս քաղմութեան մէջէն: Ան ալ ցուպի մը ապաւինած կը յառաջանայ, խորչացեալ ու դատարկ աչքերը արեւին տաքութեանը տուած, ժանտատեսիլ շարժումներով մը և կապարագոյն դէմքին վրայ յուսահատութեան ու քամահանքի եղկելի ցոլք մը պտտցնելով: Իր դէպի առաջ փութացող տգեղ քայլերուն մէջ, թշնամանքի կամ արհամարհանքի հարուածէ մը չտապ խուսափողի անորոշ մէկ արտայայտութիւնը կայ որ սակայն հակառակ իր կուրութեան, անվախօրէն մարդկային այդ ընկուղող հոհակին գիրկը նետուելու ոյժը ու եռանդը տուեր է իրեն:

Եւ այն միջոցին որ երկու արգահատելի այս կոյրերուն պարզած երեւոյթը դիտելու վրայ եմ և ահա անոնք կը մօտենան իրարու, կը մօտենան, ճիշդ դէմ դիմաց կուգան. բաղխումը անխուսափելի է և

հետեւանքը վտանգալիր։ Արդար փափաքը կ'ունենամ մէջերնին նետուելու և իրարմէ հեռացնելու զանոնք, երբ ուրիշներ անտարբեր ու ինքնահաճոյ քայլերով կ'անցնին կը սահին արագօրէն։ Բայց ցուպերու սաստիկ խաչակնքումի մը մէջ երկու կոյրերը կը զարնուին, կը բաղխին իրարու, մռայլ դամբանի մը մէջ փլչելու վրայ եղող ոսկորներու պէս տխրաձայն ու եղերական ժխոր մը յօրինելով։

Եւ երկու դառնացած ու տխեղձ հոգիներուն խորէն, նոյն վայրկեանին, միանուագ արձագանգի մը նման, ողբ մը, յանդիմանութիւն մը կը թռի, դուրս կ'ելլէ, անխմաստ տաղի մը յանկերգին պէս.

— Կոյր ես, մարդ Աստուծոյ...

Կը խորհիմ. — Քանինք կ'ան աշխարհիս մէջ որ այս կոյրերուն նման իրենց ունեցած հոգեկան կամ բարոյական մէկ պակասութիւնը դիմացինուն կը վերագրեն։

II.

...Այնան օրերուն, դրեթէ ամէն առտու, սովորաբար կանուխ, չատ կանուխ, երբ Արեւը հազիւ թէ ցուցուցած է մերթ ճաճանչաւոր, մերթ տխրամած իր դէմքը դէմի լերան յաւէտ դալարագեղ բարձունքէն, կարգ մը մարդիկ դուրս կ'ելլեն, Շիշլիի մօտակայ չքեղ ու աղնուական արուարձանին լայն ու գեղազուարճ ճեմավայրը եզերող այնքան չքեղ ապարանքներէն, մաքուր աւել մը ձեռքերնին, ամփոփելու և մասնաւոր կողովներու մէջ հաւաքելու համար բոլոր այն տերեւները, որոնք գիշերանց ինկեր են ծառերէն, մայթերուն վրայ, չկրնալով մնալ հոն հաստատ, չաղէն կամ հովէն դալկացած, նիհարցած կամ իր էգը փնտռող խելակորոյս չար ագռաւի մը կտուցի հարուածէն վիրաւորուած ու ճիւղարեկ։

Տեսարանը որ կը պարզուի այսպէս, նոյնքան հետաքրքրական է որքան բանաստեղծական ու ակնահաճոյ։ Այս մաքուր հագուած ծառաները որոնք աքաղաղներուն հետ արթնցեր ելեր են, կարեւոր ու ստիպողական դորձ մը կատարած ըլլալու գոհունակութիւնը ու հրճուանքը ունին դէմքերնուն վրայ և իրենց մարմնական ճարտար ու հապճեպ չարժուձեւերով կը մատնեն հսկայ և առողջ դորձաւորներու այն ներքին եռանդը, տենդը որ առտուան զով օդին ու տերեւներէն դուրս խոյս տուող բուրմունքին nostalgiaին տակ կը մտրակուի, հեազհետէ կը պայծառանայ, կը զուարթանայ։

Եւ ժպտագին, մերթ կատակելով, մերթ լուսկեաց, իբր թէ չխանգարելու համար չրջակայ անդորրութիւնը, կ'աւլեն ու կ'աւլեն կանոնաւոր ու հաւասարաբաժին չրջագիծերու մէջ, այնպէս մը ընելով որ մաքրուած մայթերուն վրայ հոնկէ պատահաբար անցնող սայլապանը կամ կաթնամլաճառը ոտք չի դնեն։ Ասանկով, տերեւները կը միանան, կ'եղբայրանան ճակատագրօրէն զրկուածներու պէս, կը հաւաքուին մէկ

կողմ, ճամբուն եզրը, կողովներու մէջ դրուելէ առաջ հոն պահ մը մնալով ցուցադրելու համար իր թէ իրենց այլազան երանգները, որովհետեւ բոլորն ալ դեղին չեն միօրինապէս, աչնան այս տերեւները, հիւծախտաւոր էակներու պէս: Անոնց մէջ մութ կարմիր գոյներով տերեւներ կան, ինչպէս կան բաց զմրուխտի գոյնով տերեւներ, սաթի գոյն դեղիններ, վերքի մը նման սուցած տերեւներ, բայց ամէնքն ալ վերջապէս արեւադարկ եղած, անձրեւին տակ հալած ու փճացած տերեւներ:

Բայց ամէն հեղ որ կ'անցնիմ ես, աչնան օրերուն, սովորաբար առտուները կանուխ, շատ կանուխ, Շիրիի մերձակայ այդ շքեղ ու արուեստական արուարձանին լայն ու գեղազուարճ ճեմովայրէն, աչքիս կարեւորութիւն չեն ստանար բացարձակապէս ո՛չ, այնքան շքեղ ապարանքներէն դուրս ելլող ծառաներուն մաքրափայլ վիճակը ու զուարթ դէմքը, ո՛չ իսկ մայթերուն ողորկ ու յարգարուն երեւոյթը, ո՛չ այնքան առտուան զով օդին ու տերեւներէն խոյս տուող բուրմունքին հեշտանքը և ո՛չ ալ թերեւս արեւը որ դէմի լերան յաւէտ դալարագեղ բարձունքէն իր դէմքը կը ցուցադրէ մերթ ճաճանչափայլ, մերթ տխրամած:

Ես միայն կը բաղձամ դիտել, հոն ինկած, ժողովուած անկենդան տերեւները, գուրդուրանքի ու պահ, ենթակայ այդ քնքուշ տերեւները, բնագոյնաբար երանի տալով: Եւ որ փոխանակ ամայի լեռնադաշտերու կամ անշուք անպաճոյճ պարտէզներու անխնամ ու տխեղծ ծառերուն վրայ ապրած ըլլալու, ճակատագրային հզօր օրէնքով մը եկեր դրուեր են ազնուական ու շքեղ բնակարաններու պատուարեր դրացնութեան մէջ, իրենց հովանին սփռելու նոյնքան շքեղ ճեմովայրին վրայ, իրենց բուրմունքը տարածելու նոյնքան ազնուական սիրահարներու գլխուն վրայ և ասանկով, իրենք ալ հետզհետէ ազնուացած, վերջէն, յարգուած, թանկագին իրերու պէս, մարդոց ազտոտ ոտքերուն տակ չկոխկրտուած, չփշրուած, խնամքով հաւաքուելու, մասնաւոր կողովներու մէջ ամփոփուելու և անկէ ծովուն հոսանքին տրուելու բախտին կամ թերեւս փառքին ալ տիրանալու, արժանանալու նպատակով, ո՛վ գիտէ:

III.

...Յանկարծ թռչուն մը կ'իջնայ վերէն, պատուհանիս մէջ և կտուցի մեզմ հարուած մը տալով ապակիին, իր հաճելի ներկայութիւնը կ'իմացնէ ինծի: Սիրուն ու քնքուշ արարածը. կ'ախորժիմ իր այս հաճոյակատարութենէն: Գունաւոր դունազևիդ փետուրներ ունի, արեւին լոյսին տակ փալիլուն ու փոփոխական, որոնց մէջէն սարսուռներ կ'անցնին անընդհատ: Եւ թռչունը հանդարտ չէ իր կեցած տեղը, անդադար կը շարժի, կ'ոստոստէ, պոչը կը տատանէ յարատեւ, ոտքե-

րուն վրայ կը կայթէ, կը խայտայ, դարպաս կ'ընէ ինծի, զիս գրաւելու, հրապուրելու բնազդական տենչով մը թերեւս, պշտանքով ու նազանքով խառն, բայց հազիւ թէ շարժում մը կ'ընեմ դէպի իր կողմը, անիկա ամփոփած է ինքզինքը արդէն, պոչը ուժգին շարժումով մը կը բաբախէ անգամ մը, կլոր չըջան մը կ'ընէ իր ոտքերուն վրայ և թեւերը բանալով առանց հրաժեշտի, կը նետուի յառաջ:

Եւ կը թռչի կ'երթայ:


Սէրն ալ այս թռչունին կը նմանի ահա: Յանկարծ, օրին մէկը, անիկա կը մտնէ մեր ներսիղին, հզօր թեւածումով մը և կտուցի թեթեւ հարուած մը կուտայ մեր սրտին դոց ապակիին: Կ'ախորժինք իսկոյն իր շնորհալիութենէն, և մեր զգացումները, տաւիղի մը թելերուն պէս կը զարթնուն, կը պրկուին, կը հնչեն: Վայելքի, գորովի հառաչը, աղապատանքը կը խուսափին մեր էութեան խորէն և կը փութանք պատրաստուել այն խորանը որուն առջեւ պիտի ուղէինք կեանքի բոլոր յոյսերը, բոլոր երազները ողջակէզ ընել: Բայց ահա Սէրը կ'ամփոփէ ինքզինքը, անհանդարտ վիճակ մը կ'զգենու, կը խայտայ, հրապուրանքի տերուներ կը սփռէ կը տարածէ մեր շուրջ. յետոյ հազիւ թէ մեր ձեռքը կ'երկարենք դէպի իրեն, անիկա մենէ փախչելու ջանք մը չ'ընէ, ծիծաղելով մեր յուսահատութեան վրայ, մեր լլկումէն կը խորչի և երբ կ'աղերսենք, կը քրքջայ մեր երեսին, կը սքօզէ իր հեշտութիւնները, և կը լքէ մեզ:

Եւ կը թռչի կ'երթայ:

ՏՕՄԻՆՕ

“ԾԱՂԻԿ,, ԿԱՆԱՆՑ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Բ.—



Ի՞նչ պիտի հասկնայ ա՛յն ընթերցողին որ երոպական լեզուին a b Շն չճանչնալէ զատ՝ իր մայրենի լեզուն հազիւ անսխալ գրել կարդալ գիտնայ: Ինչո՞ւ այս մենամոլութիւնը այսքան պինդ օտարաբանութեան, իրենք կրնա՞ն առանց խղճմտանքի հաւանութեան քուէ տալ իրենց գրական այս կերպ որդեգրումին:

Կը հասկնանք երբ հայերէն նորակազմ և կամ անընդունակ բառի մը քով բացատրիչ ֆրանսերէն կամ տարլեզու բառը փակագծով, բայց ինչի՞ վերագրել այս անտեղի յաճախաբանութիւնները օտար գրական մթնոլորտէ՝ որ գրուածքը անհասկնալի և ցրուբառուն դարձնելէ զատ օգուտ մը չունին, ընդհակառակը մեր գրականութեան՝ և պէտք է շեշտել՝ գաւառաբարբառին հարուստ գանձերը լքելու, ժանգոտելու կը նպաստեն: Եւ այս կէտին աղէ՛կ բծախնդիր ըլլալու էին մանաւանդ մեր

նպատակը, և բնաւ չեն կրնար արծարծած ըլլալ ընթերցասիրութեան փափաքը՝ մեր անուս և առաջնորդութեամբ կարօտ իգական սեռին մէջ:

Որ գրուածքն է որ ակոթով կը կարդացուի, կը վնասուի, եւ կարգաւ չգիտցողէն իսկ կը լսուի. ա՛յն՝ որ կը գրուի հասկցողին համար, բարձրիմաստ, ոլոր մօլոր, դարձդարձիկ լեզուով, որ չհասկցողին չինարէնն ըլլալու դատապարտուած է, թէ չէ ա՛յն՝ որ գրուած է ժողովրդային հասկնալի լեզուով, գործնականին հետեւողութեամբ և ամէն դասակարգէ անճիգ ըմբռնելի, պարզ ուղղութեամբ մը, որ մայրական «օրօր»ներուն չափ անջնջելի կը մնան յիշողութեան մէջ և օգտիւ ալ կը կիրարկուին անկէ քաղուած դասերը:

Պոլսուհիին ու գաւառուհիին ուսումնական մակարդակը համեմատական չեն ըսի, բայց երբ նոյն իսկ թուաբանական անհամեմատելիներն միջոց մը կ'ունենան, կանոնով մը կը յաջողին իրարու համեմատական գալ, իմացական աշխարհի մէջ անկարելի խտրոց գնելու է զարգացեալին ու անուսին միջեւ: Այն ատեն ի՞նչ է ուրեմն թերթի մը, հրատարակութեան մը կոչումն ու պաշտօնը: Ինչո՞ւ լեցուն տողեր, սիւնակներ ու էջեր, երբ անոնք հաւասարապէս մարտելի չըլլան ամէնուն, կամ դժուարամարս կտորի մը քով դիւրամարս պատառիկներ ալ չհրամցուն տանտիկնական ամենատարրական յանձանձումով:

«Ծաղիկ»ին դերը բնութեան ծոցէն քաղուած գեղեցիկ ծաղիկի մը ինքնութեան պէս մաքուր, անխառնաւ և սեփական ըլլալու է, անոր պէս անխտրական, բայց ո՛չ անոր պէս անդիտակ ու անխնայ, անոր պէս սիրուն ու սրտահաճոյ, այլ ո՛չ պոռոտ, փծուն, առակ-չառակ, անոր պէս գեղազտական ճաշակի բնունակ և դրդակ, անոր պէս բնիկ ու ի՛սկ գոյներու շաղակցութիւն մը, անոր պէս ամէն սեղաններու զարդ եւ ոչ՝ հազուադիւս, տարաշխարհիկ ու անձեռներեկի տունի մը, անոր պէս հասարակ գեղջուհիէ՛ն աւելի ճանչցուած՝ քան ձեռնոցներ ու զարդեր դրած փափկասուն կօկօնաւէ մը, որ արդէն չատ պէտք ալ չունի ծաղիկի, երբ ինքն իսկ է ծաղիկ մը անձնեղէն և երբ յաճախ իր քաճառովի միայն կը պատուէ այդ «Ծաղիկ»ը իր ապրած կեանքին, իր ընկողմնած բարձերուն, իր քսուքտած բոյրերուն ու փոշիին, իր դրած սեղմիրանաւոր, ուռուցիկ ու փրփրուն մետաքսներուն, իր մարմուն աչուկներուն, մեղմեղ թարթիչներուն, վերջապէս իր ներքնասնեակին ու անձին ներաշխարհին նկարագիրը կարգալով հոն, անոր թերթերուն մէջ՝ գուցէ այնքա՛ն ալ անճարակօրէն պատկերուած:

«Ծաղիկ»ը, իր կնոջական թանցրացեալ՝ բայց գործնական կրթարան՝ մօր մը հարազատ գուրգուրանքովը պէտք է որ նալի ինչպէս իր լեզուն սորված մերձակայութիւններուն՝ այնպէս՝ ալ իրմէ հեռակայութիւններուն վրայ, որոնց տալու է ձեռնհասօրէն՝ քրոջական խրատներ, հրահանքներ, դասեր՝ ամենապարզ լեզուով, միշտ անհրաժեշտօրէն և անմի-

ջական կերպով օգտակար հանդիսանալու հաստատ մտադրութեամբ. պէտք է նոյնքան ոգեւորի, ջանքեր ընէ թերթը հաճելի ու մատչելի ընծայելու անոնց ալ, որքան մեր շնորհալի, բայց այլասերման ճամբան մտած Հայ պոլսուհիներուն գղութիւնք հանդէսը ըլլայ անխուսափելիօրէն:

Պիտի առաջարկէի յատկապէս որ «Ծաղիկ»ի շնորհալի խմբագրութիւնը «Գաւառուհիներու բաժին» մը բանար իր միւս ճոխ ու բազմադան վերացական բաժիններուն մէջ, ուրիշ կարենային ուղղակի օգտուիլ իրենց գաւառացի սեռակիցները, որոնց համար — ցաւ է ըսել — տող մը իսկ մատչելի ու պիտանի բան մը չերեւար «Ծաղիկ»ի ցարդ բացած բաժակին մէջ, և յանուն որոնց գրելով այս տողերը ջերմաբան փափազող եմ նորաբաց «Ծաղիկ»ի անթաւաժութեանը ու կատարելացմանը:

Վ.ԱՆ

ՏԻԳՐԱՆ ԶԻՅՃԵԱՆ

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

ՊԱՐԶ ԿԵԱՆՔԸ. — ԵԱՐԼ ՎԱԿՆԵՐ

Թարգմ. ՅՈՒՀԱՆՆԷՍ ԱԼԻՔՍԱՆԵԱՆ

Բաղմակնծիւ, բարդ, վշտահոծ, տենդա-յոյզ ու հոգեւապառայն կեանքին մէջ, ուր քաղաքարթութեան բազմապստանջ մտահոգութիւնները մարդը կը մղեն հոգեմաշ պայքարի մը, Շարլ Վակնէրի Պարզ Կեանքն կազդուրիչ շունչ մը ու հեշտաւէտ սփոփանք մըն է, քաղաքող բոլոր խոնջած միտքերը, բոլոր կենսամաշ հոգիները, լուսաւէտ ու խաղաղ ովասիսի մը խոստումով, բոլոր աղմկալոյզ տենդոտութեանը մէջ քաղաքակիրթ կեանքի կալանքներուն, յոգեւորութիւններուն, դառնութիւններուն: Պարզ Կեանքն թարգմանիչը, Յովհաննէս Ալիքսանեան, հայացնելով խօհուս ու փորձ հեղինակի մը՝ ինչպէս է Շարլ Վակնէրի գործը, այդ կազդուրիչ շունչով բարախուն բախտան մը կը սրսկէ յոգեւորական միտքերու վրայ, մեր մատենագրութիւնը օժտելով օգտաւէտ հատորով մը: Շարլ Վակնէր իր ազգին մէջ երկար ատեն անծանօթ մնացած ու լքուած հեղինակ մըն է եղած, և երբ ֆրանսացի թարգմանիչներ առաջին անգամ զայն ծանօթացուցած են ֆրանսական միտքին, ան խանդավառ ընդունելութեան մըն է արժանացած, և իր գիրքը ձեռքէ ձեռք յափշտակուած բազմաթիւ տպագրութիւններու հասնելով, Գրեթէ ֆրանսացի թարգմանիչներ եղած են զայն

ծանօթացնող՝ ինչպէս իրենց ազգին, նոյնպէս հեղինակին հայրենիքին: Եւ այսօր աշխարհահռչակ գործ մըն է Շարլ Վակնէրի Պարզ Կեանքն, որ իր անհամար համակիրներէն աւելի՛, ունի իր հաւատացեալները, որոնք անոր խոսացուցած սկզբունքները մինչեւ վարդապետութեան մը արժէքին բարձրացուցած են, զայն դաւանելով ու քարոզելով ամէն կողմ: Իր այս արժէքովը՝ շնորհաւորելի գործ մըն է անոր հայացումը, զոր մաքուր աշխարհաբարով մը կատարած է թարգմանիչը, բացի մասնակի թեթեւ թերիւնէրէ: Գործին հեղինակը, իր նիւթը վարպետի մը գրիչով ու խորատես, ապրած մարդու լայն հայեացքներով և հրապուրիչ հմտութիւնով մը՝ ընդլայնած ու զարդարած է, անոր ընթերցումը զարճնելով ա՛յնչափ հաճելի, որչափ չներեր որ և է չոր նիւթի ընդթը: Համեստօրէն պերճախօս նիւթը այս գիրքին, առերեւութապէս ըլլալով բաւական ռամիկ ու սովորական, չէ՛ երբեք վարժապետական ու տաղտկալի, զրուած զանդաղ ու անհրապոյր այն ոճով՝ որ յատկանիշն է անդլիացի ճառամոլ հեղինակներէ շատերուն: Զուարթ, յանկուցիչ ու սրամիտ է իր ոճը, ստո՛վ իսկ աւելի առինքնող՝ իր ամբողջութեանը մէջ, իր վարդապետած սկզբունքները, պէսպիսուն նիւթերը, կեանքի ամէն վիճակներու և պայմաններու վրայ լայն հայեացքներով ու ողջամիտ խորհրդածութիւններով, ա՛յնչափ թեւեղիչ ու զարգացուցիչ հեղինակաւորութեան մը դուռը կը

կրեն որ՝ կարելի է առանց անպատեհութեան ըսել թէ՛ ընթերցանութեան լաւագոյն դասագիրքերէն մէկը ըլլալու արժէքին մէջն ալ է բազմաթիւ շահեկան էջերով այս հատորը, զոր Մատթէոսեան Տպարանը խնամած է մաքուր ու սիրուն տպագրութիւնով մը:

Ե. Ա.

ՄԵՐ ԿԵԱՆՔԷՆ

Դեռ ծարմ տպաւորութեանը տակ Սինան, եանի 41րդ երաժշտական հեղինակութեան, Cadrille Nouveauté, համակրելի երգահանը սիրուն անակնկալը կ'ընէ մեզի ներկայացնելով իր 42րդ հեղինակութիւնը, Bonheur Perdu, դաշնակի համար, անշուշտ արժանի այն համբաւին ու ընդունելութեան, զոր վայելած են իր միւս երաժշտական գործերը:—Անակնկալ մըն է նաև իբր երաժշտական... հեղինակ յայտնումը Պրն. Գ. Թօլայեանի, տանըջորս տարու տաղանդաւոր երաժշտասէր մը, որ արդէն արժանացած է գնահատութեանը բազմաթիւ կարող երաժշտագէտներու, և որ երաժշտական աշխարհին կը ներկայանայ իր High Life կտորով, դաշնակի համար, Պրն. Գ. Թօլայեան կրտսեր որդին է Մէնմուալի Ախպարի Տէր, և Տնօրէն Յովհաննէս էֆ Թօլայեանի, և եղբայրը՝ հանրահռչակ Միմոսին («Կալոնօշ»):

: օ: Ստացանք ձիհան Գրատունի մինչեւ հիմա հրատարակած պրակները Րէսիմլի Դամուսը Օսմանի Բառարանին, որ հշմարտապէս արժէքաւոր աշխատասիրութիւն մ'էն է, թէ՛ տպագրական խնամքովը և թէ իբր հեղինակոնքին:

: օ: Դեռ լիովին ապաքինած չըլլալուն պատճառով իր Տնօրէնին, Սուրհանդակ կը հրատարակուի չորեքշաբթի և շաբաթ օրերը, խմբագրութեամբ Տիար Սատուր Տէր Մատթէոսեանի, որուն կ'աջակցի իր նախկին խմբագիրներէն Տիար Յակոբ Վարժապետեան:

★ Ուսուցչապետ Ռ. Յ. Պէրպէրեան, տկարութեանը պատճառով՝ որ զինքը անկողինի կը ծառայեցնէ, չկրցաւ շարունակել Մառխի մէջ սկսած իր Իմաստասիրա-

կան Դեմքերը, զոր պիտի վերսկսի ու աւարտէ՝ առաջին առիթով որ կարենայ զրիչ ձեռք առնել, Շուտափոյթ ապաքինում կը մտղծենք յարգելի դատարարսկին և մեր մեծանուն աշխատակիցին:

★ Տեղի անձկութեան պատճառով, քանի մը թիւերու մէջ հարկադրութեամբ զանց ընել շարունակութիւնը Լէոնիտ Անտրիէֆի Նիլշի Զոնքին և Ա. Իւելագէսեանին, զորս պիտի վերսկսինք մօտաւոր թիւերով:—Այժմէական նիւթերու տեղ տալու համար է նոյնպէս որ, մեր Քրոնիկի էջերուն սահմանը ստիպութեամբ նեղել մէկ-երկու թիւերու մէջ:

★ Մօտաւոր թիւով մեր բոլոր բաժանորդները իրենց թերթը պիտի ստանան տպագրուած հասցէներով, որոնց պատրաստութեանը ձեռնարկած ենք արդէն:

ՀԵՏԱՌԲՐԲՐԱԿԱՆ

Ո՞վ միտքէն կ'անցնէր որ Պօղ Էւ Ա. Երզնկէն մեծ դժբաղդութիւն մը պիտի պատճառէր տղայ Լամարժինին: Ապագայ տաղանդաւոր բանաստեղծը այնքան մեծ հետաքրքրութիւն կը ցուցնէր այդ զեղեցիկ հովուերգութեան համար, որ երբ ծնողը կ'արգիլէր իրեն զիշերուան լոյսը, Լամարժին իր փոքրիկ սենեակը կը լուսաւորէր պլորուած ծուղկներով, զորս իրարու ետեւէ կը փառէր: Այնպէս որ շատ չանցած իր տունը կրակի տուաւ:

★ Տիկին Լինա Գալվէ, համբաւաւոր երգչուհին, իր վերջին Ամերիկա ճամբորդութեան տտեն, բնաւ պանդոկ չիջեւանեցաւ, իբրեւ պանդոկ ծառայեց իրեն հիւրասրահ վակոն մը, որուն մէջ կը գտնուէր ճաշասենեակ մը, ամէնքն ալ վերջին նորաձեւութեան համեմատ կահաւորուած:

★ Միացեալ Նահանգներու նամակատուփերուն մէջ ամէն տարի վաճառուն հազարի չափ դրոշմաճուղմ կը գտնուի, որոնք աղէկ փակցուցած չըլլալուն համար մէջը կը մնան:

Ուսադուրիւն Խմբագրութեան հասցէին՝ որ Պոլսէն փոխադրուած է Կալարա: Տեճնէ կողմի վրայ:

Հիմնադիր. Կ. Ս. Իոթի-ձեմա: Արտոնագր. 80ԲԺ. Ե. ՄԱՍԻՍ: Տպագր. ՍԱԿԱՅԱՆ

ՄԱՀԵՐ. — Կարապետ Աղա Շիկանեան (Արալանպէկ): — Տիկին Եղիսա-
բէք Հայրապետեան (Պարտիզակ): — Օր. Մարիցա Դաշտէճեանեան. յու-
ղարկ. Մայր Եկեղեցի: — Տիար Պետրոս Ս. Ապստեան, յուղարկ. Մայր
Եկեղեցի. Թաղում Պալլադի Ս. Ղ. Գ. Գերեզմ.: — Տիար Մկրտիչ Պալեան,
(Երեւան) Ռուսահայ գրաքարագէտներու նեստոր: — Տիկին Մարիսա
Գրալեան, յուղարկ. Նիկոմիդիոյ եկեղեցին, Թաղում տեղին գերեզմ.:
— Ստեփան ԿՓ. Չափեան (Իզմիր) (արդիւնաւոր ուսուցիչ): — Տիգրան ԿՓ.
Հօճաեան, յուղարկ. Մայր եկեղեց.: — Ստեփան ԿՓ. Թօփուզեան (Պար-
տիզակ): — Օր. Ա. Օհանեան (Իզմիր): — Տիար Տիգրան Չազմաճեան
(Կեսարիա):

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք Ձեր բաժանորդագիրը. — Ամեն. Տ.
Օրմանեան Ս. Պատրիարք. Տեարք. — Յովհաննէս Շամլեան, Ձգծն
Խօրասանճեան, Ռ. Բէլճիք, Արաւամ Սատտէթեան, Մ. Խոչեան,
Գեր. Տ. Տրդատ Կպիսկ. Պալեան, Գարեգին Տէմիրեան, Գարեգին
Համբարձումեան, Հմայեակ Ուղուրեան, Վահան Ասլանեան, Գեր.
Տ. Մկրտիչ Կպիսկ. Վեհապետեան, Յ. Տէր-Առաքելեան, Յ. Յովիկ-
եան, Յակոբ Յակոբօֆ, Տօքթ. Վ. Թորգոմեան, Յովհաննէս Աճէմեան,
Եղբարք Թէշլիբեան, Արշակ Թիւթիւնճեան, Եղբարք Գնաճեան:

Դիտ. — Տիար Գրիգոր Հ. Կարապետեանց, Ձեր անունը «Խմբա-
գրական Արձանագրութիւններ»-ու Բաժինին մէջ սխալմամբ գրուած էր
«Գրիգոր Խօսկանց», զոր կ'ուղղենք:

Հայ Ս. Եկեղեցիի հաւատացեալ ժողովուրդին դիւրութեանը համար
մասնաւորապէս՝ Սահակ Ռ. Խանճեանի կողմէ պատրաստուած ամէնէն
ճոխ, ամէնէն գեղեցիկ, ամէնէն ընտիր Աղօթագիրքը, որ իր 700ի մօտ
էջերով կը բովանդակէ բոլոր եկեղեցական արարողութիւնները և աղօթք-
ները, կը ծախուի ամէն տեղի համար լաթակազմը 10, ոսկեզօծը 17,
փառակազմը 25 զրշ.ի: Դիմել Ջարդարեան գրատունները. Կ. Պոլիս
Չաքմաքճըլար, Թիւ 24-26: Եւ Բերա Գուլէ-Գարու, Թիւ 635:

ԱՐԵՒԵԼՔ

Օրաթերթ ազգային, գրական և քաղաքա-
կան: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան՝
Կ. Պոլսոյ համար 80 զրշ. գաւառներու համար 108 զրշ. և օտար եր-
կիրներու համար 35 Քր: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանոօ փողոց: ԱՐԵՒԵԼՔ
հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ,
ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ՊԱԼՔԱՆ

ՍՌԱՆՁՆԱՇՆՈՐԶԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ և պահեստ Ֆրանք 9,500,000

Վերապահովագրական

Դրամագլուխ և պահեստ > 142,740,00

ՊԱԼՔԱՆ Ընկերութիւնը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւն. : Կ. Պոլսոյ և Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ շատ դիւրամատչելի պայմաններով. իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի գիներով և պայմաններով օժտուած է. կը կատարէ խառն ապահովագրութիւն, ընտանեկան, մանուկներու, եւն. եւն. :

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ

Ղալաթիա, Տեօյլէ Օրիէնդ Պանքի կից, Սինասոն Խան. (2)

Հանգուցեալ Կարապետ էֆ. Իւթիւճեանի Թարգմանած հետեւեալ հետաքրքրական գիրքերը կը ծախուին բոլոր հայ գրավաճառներու քով. Կեդրոնատեղի Այճեան գրատուն :

Ընտանեկան Գաղտնիքներ 3 հատոր 15 Ղրշ.

Արուարձանին Տղան 3 հատոր 15 Ղրշ.

Հանրակառքին ՈՏԻՐԸ 5 Ղրշ.

Ամուսնութիւնք Բարիգու 5 Ղրշ.

Քաղաքական Տնտեսութիւն. Ժօղէֆ Կառնիէ 5 Ղրշ.

«ՄԱՍԻՍ» Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և դաւառներու համար տարեկան

60 դր.:

Արտասահմանի

14 ֆրանք:

Թղթատարութեան ծախքը մեր վրայ:

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգեւները,
միշտ ձրիաբար, Թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ:

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է:

Զննատարակուած ձեւագիրները ետ չեն դարձուիր:

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն

در علم غلط قورشونلی خاندانده نومرو ۷ «ماسيس» غزتمسى اداره خاندانده

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Գուրեումնու խան, քիւ 7, Կալաթա, Կ. ՊՈԼԻՍ

Rédaction de la Revue "MASSIS,"

Nº. 7, Courchounlou Han, Galata,
CONSTANTINOPLE

ՆՈՐ ՊԱՐԳԵՒՆԵՐ

«ՄԱՍԻՍ» Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Մասիսի ծանօթ պարգեւատր բաժանորդագրութիւնը,— որ իր նորութեամբը մեծ ընդունելութեան արժանացաւ, և որով խմբագրութիւնն փափաքը ունեցաւ զրական զեղեցիկ հատորներով օժտելու իր բաժանորդներուն մատենադարանը, բացառիկ զոհողութեամբ մը, —կ'աւարտի այս Թիւով: Միշտ մեր բաժանորդները իրենց բաժանորդագրութեան հետ սիրուն պարգեւներով օժտելու փափաքով, և չգրկելու համար նոր բաժանորդագրուողները՝ մասնակցելու առիթէն պարգեւներուն, այս Թիւով կը հաստատենք ուրիշ պարգեւներու տրութիւն մը՝ որուն վրայ զաղափար պիտի տանք մօտաւոր Թիւով մը: Փետրվար մէկէն ինչեւ մարտ 15 Մասիսի բաժանորդագրուող բոլոր բաժանորդներ, ձրիաբար պիտի ստանան մեր նոր պարգեւը, որ իր գերազանցապէս հրապուրիչ հանգամանքովը՝ կարող է զրաւելու համակրութիւնը ամէնէն դժուարահաս ընթերցողին: Ամբողջ տարի մը Մասիս Դրական Շաբաթագրութիւն հետ՝ ամենասիրուն պարգեւի մը տիրանալուն առիթը՝ փոխան միմիայն 60 դր.՝ պատճառ մըն է որ ընթերցողներ փութան իրենց կանխիկ բաժանորդագրութիւնով արձանագրուիլ Մասիսի, առանց սպասելու մեր պարգեւներու յայտնուիին, ժամանակին նպաստաւորելու: համար անկէ՛ Ամիսուկէտուան կամար՝ կարհնալ առիթ մըն է: ամէնէն հեռուօր տեղերու ընթերցողներուն հասցեները իրենց բաժանորդագիրը, որպէսզի չի կորսնցնեն պարգեւներուն տիրանալու առիթը: Այդ պայմանաժամէն ետքը հասնող բաժանորդագրութիւններ՝ անհամանակից կը մնան պարգեւատր բաժանորդագրութեան: Վստահ ենք թէ Մասիսի բաժանորդագրութեան մէջ մտցուած բաժանորդներու համար մեծապէս շահաւէտ այս առիթն ալ պիտի ողջունուի այն համակրութեամբ՝ որով ողջունուեցաւ գիրքերու պարգեւի մեր նախորդ պայմանը: